

նացինք ընծայել մեր սիրելի և պատուական իշխանին անուանը և իր ազնիւ Ղազարոսին :

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Նախապաշարմունք չէ :

ԱՆՈՒՆԱՐԻՍ մէջ որ և իցէ գործ շատ կերպով կրնայ ըլլալ. ուստի տես թէ ինչ մեծ դժուարութեանց մէջ կ'իյնայ մէկը երբոր ուզէ որ հազարաւոր մարդիկ մէկ գործքի մը վրայ մէկ կերպով մըտածեն, և ամէնքն ալ նման ընեն իրարու : Ասան զի եթէ հազարն ալ տարբեր տարբեր կը մտածեն, երբոր կ'ուզեն որ ըրածնին իրարու նմանցնեն՝ որո՞ւն ըրածին պէտք է հետեին ամէնքը. ամէն մէկը իրենն առաջ կը բերէ. յայտնի է թէ անկարելի է մէկուոր ամենուն հաւնեցնել : Ուրեմն ինչ ճար կրնանք ընել որ աս հազար մարդիկը միաբանին ու ամէնը մէկուոր հաւնին : Ուրիշ ճար չկայ, բայց եթէ քննել թէ ամենէն վայելուչն և ընտիրը որն է, ու ամենուն միտքը համոզել որ անոր հաւնին : Աս բանս գրեթէ անկարելի կ'երևնայ. վասն զի թէ և ոմանք հաւնին, բայց շատը իրենցը կը սեպեն ընտիր. որովհետեւ ծնողացմէ ժառանգութիւն առածի պէս՝ անանկ ընել խրատուեր են, անանկ սորվեր են : Աս է ահա կանխակալ դատումն կամ նախապաշարմունքը ըստածը, որ ամէն աշխարհք, ամէն ազգի մէջ, ամէն քաղաք և ամէն տուն կը գտնուի : Ասկէ կ'ելլեն ամէն տեսակ կռիւներ, իրարու չհաւնիւնք, անհաշտ թշնամութիւններ, և չպատմուելու վնասներ : Արդեօք ինչպէս կարելի պիտի ըլլայ այդի մը մէջէն աս նախապաշարմունքը վերցնել, աշխիքն ամենուն կարծիքը միաբանել հարկաւոր գործքերու մէջ : Այնչափ դժուար է աս բանս որ կարծես թէ հարկ կը սեպուի թողու որ ամէն մարդ իր գիտցածին հետեի : Բայց աս բանս ալ անտանելի է շիտակ մտածել ուղղով մը, և ամէն բանին աղէկին փափաքողի մը համար. վասն զի յայտնի է թէ ամէն բանին գէշը շատ տեսակ կ'ըլլայ, իսկ աղէկը և ճշմարիտը մէկ տեսակ : Դնենք թէ մէկն ունի ստակով լեցուն սրնտուկ մը որ վարպետ հնարքով մը փակած է, և կը խոստանայ բոլոր ստակը տալու ան մարդուն՝ ով որ կարենայ վարպետութիւնն իմանալ ու բանալ : Հազարաւոր մարդիկ կը սկսին մտածել, գիտել, քննել, ու այլ և այլ հնարքներ բանեցնել : Այնչափ մտածողներուն մէջ ո՞ գիտէ քանի վարպետ գիտեր հնարողներ կը գտնուին՝ ամէնքը իրարմէ տարբեր, ամէնքը իրենին հաւնած. բայց ամենքն ալ անտուկին ինչ հնարքով բացուիլը չգիտցող և պարսպ տեղը աշխատող. վասն զի անտուկին բանալու հնարքը մէկ տեսակ է. ով որ կ'ուզէ յաղթել՝ ան մէկը պէտք է գտնէ. ան չգտնելէն վերջը՝ ամէն խօսք, ամէն աշխատանք, ամէն պարծանք պարսպ է : Այսպէս ահա խառնափնդոր

իր մտքին ուզածն ընելու շատ ճամբայ կայ, բայց աղէկն ու ճշմարիտն ընելու ճամբան մէկ է : Ուրեմն այլ և այլ կարծիքները միաբանելու համար ինչ պէտք է ընել : Պէտք է որ ամէն մարդ իր ըրածները քննէ. կ'ուզէ ծնողացմէ սորված ըլլայ, կ'ուզէ ուրիշէն խրատուած ըլլայ. ու երբոր տեսնէ թէ ան բանին ուրիշ ճամբան կայ, որ 'ի գործ գնէ նէ՝ օգտակար պիտի ըլլայ թէ ազգին և թէ իրեն, կամ թէ գոնէ իրեն վնաս մը չկայ՝ բայց ուրիշ օգուտ կայ, պէտք է իր սովորութիւնը թողու, գիտնալով որ ան իրեն նախատինք չէ, այլ փառք է : Ահա գիւրին ճամբուն մէկն աս է :

Բայց նախապաշարմունքը ըստած գիտալ զորաւոր ըլլալուն, աս բաներս գիտնալէն ետքն ալ շատ դժուար կը բժշկուի : Դիր թէ մէկ գեղացի մը երկու որդի ունենայ նոյնահասակ, որոնցմէ մէկն առնու եւրոպացի գեղացի մը մեծցնէ, կրթելով իր ազգին սովորութիւններովը և երկրագործութեան կանոններով. մէկայն ալ մնայ ծնողացը քով, և արեւելեան սովորութիւններովը վարժի. ետեւ ասոնք երկուքը մէկտեղ գան : Ալ մոտիկ ըրէ ասոնց մէջ եղած անվերջանալի կռիւն ամէն բանի վրայ : Ահա ասանկ զորաւոր է սովորութիւնը ամենուն մտքին մէջ. անանկ որ մարդ շատ անգամ կարծէ թէ իր ըրածը՝ խօսածը՝ սովորած ըլլալուն համար չէ, այլ աղէկն ուզելուն համար է. և ասիկայ ծուռ բաներու վրայ ըլլայ նէ՝ կ'ըսուի նախապաշարմունք :

Ուրեմն ան բարեսէր ընթերցողներն որ կ'ուզեն նախապաշարմունք յաղթել, պիտի գիտնան թէ մարդս երկու կերպով կրնայ մէկ գործքի մը ետեւ ըլլալ. մէյմը սովորութիւն ըրած ըլլալուն համար, և երկրորդ՝ մտածած ըլլալուն համար : Եւ որովհետեւ ըսինք թէ սովորութիւնն է աս նախապաշարմունք սկիզբը, ուրեմն անանկ վարժած ըլլալուն համար՝ մեր սովորութիւնն ասանկ է ըսելով բանի մը ձեռք զարնելը վերցնելը մեջքնէս. ամէն մարդ ըրած գործքը քննէ, ամէն ըրածներուն վրայ մտածէ. եթէ իրեն մտածութիւնը ուրիշ գիտցողներուն խորհրդին հետ միանայ նէ՝ ընէ, ոչ անոր համար թէ սորված է, այլ վասն զի գործքին վախճանը և խելքը այնպէս կ'ուզէ որ ըլլուի : Ասկէ ետքը ամօթ սեպուի ըսելով թէ ես ասանկ կ'ընեմ՝ վասն զի ասանկ վարժեր եմ, ասանկ լսեր եմ, ասանկ տեսեր եմ. այլ ամէն մարդ ալ իրեն ըրածին իրաւացի պատճառը տայ՝ ըսելով. ասանկ կ'ընեմ՝ վասն զի մտածեր եմ, կամ օգտակար ըլլալը իմացեր եմ : Եւ աս խօսքին ճշմարիտ ըլլալուն նշանն ըլլայ, որ երբոր մէկն իրեն առաջարկէ ալ աւելի օգտակարն ու աղէկը, սիրով պատճառները մոտիկ ընէ, ու տրամաբանել սորված խելքին հետեւելով գործէ : Ասոր ներհակ, թէ որ մէկն ըսէ թէ ես սովորութեամբ չեմ գործեր, ու չուզէ մոտիկ ընել ուրիշի պատճառներուն, և զարձեալ պնդէ իր սովորութիւնը՝ կարծիքը, աս ալ նշան ըլլայ թէ այնպիսի մարդը գեռ. նախապաշարմունք մէջ ընկղմած է, և չուզեր խոհեմութեան հետեւիլ : Ահա այսպէս անկարելի երեւցած բանը խելքով կը գիւրանայ ու 'ի գործ կը գրուի :